Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը եզդիական համայնքին Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի առթիվ (20.04.2022 թ.)

Հայաստանի եզդիական համայնքի հարգելի ներկայացուցիչներ,
Ջերմորեն շնորհավորում եմ Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի տոնի կապակցությամբ:
Հայ և եզդի ժողովուրդների կապը գալիս է հնագույն ժամանակներից, ու դա են փաստում թե՛ ժամանակակից, թե՛ պատմական աղբյուրները:

Հայ ժողովրդի պատմությունը նաև եզդիների պատմությունն է, քանզի հայերի համար դժվարին ժամանակներում միասին պայքարել ու մաքառել են՝ հանուն հայրենիքի, հանուն խաղաղ ու բարեկեցիկ կյանքի: Ուստի, մենք հպարտ ենք, որ դուք ձեր ապահով տունն եք գտել մեր հայրենիքում, որ ապրում եք ազատ, լիարժեք, պահպանում ձեր մշակույթը, լեզուն, պատմությունն ու ավանդույթները, ինչը հանդուրժողականության յուրօրինակ դրսևորում է սերունդների համար: Իսկ Արմավիրի մարզում գտնվող արդեն 10-ը տարվա պատմություն ունեցող սրբատեղին վկայությունն է հայ և եզդի ժողովուրդների եղբայրության, հավատարմության ու հարատև բարեկամության:

Սիրելի հայրենակիցներ, շնորհավորելով բոլորիդ այս լուսավոր տոնի՝ Մալաքե Թաուսի կապակցությամբ և միանալով ձեր ուրախությանը՝ ցանկանում եմ խաղաղություն մաղթել Մայր հողին, անվտանգ ծառայություն երկրի սահմանները պահող հայ և եզդի քաջորդիներին ու խոնարհվել հանուն հայրենիքի նահատակված հերոսների հիշատակի առջև:

Թող նոր տարում խաղաղ երկնքի ներքո հասնեք ձեր փոքր ու մեծ, անձնական ու համընդհանուր նպատակների իրականացմանը: Թող Մալաքե Թաուսը բարօրություն, սեր ու խնդություն պարգևի բոլոր ընտանիքներին:
Ամենայն բարիք:
Շնորհավոր Մալաքե Թաուս:

Լավագույն ցանկություններով՝
Էդվարդ Հովհաննիսյան